

ԿԿՈՒ

ՄԱՆԿԱԴԱՍԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ



Թիւ 32

ՍԵՊՏԵՄԲԵՐ Ա . 2020

ՕՁԻՆ ՄԱՀԱՑՈՒ ՉԷՆՔԸ



Գիտեք, որ օձը շատ վտանգաւոր սողուն է իր թոյնին պատճառով:
 Բայց գիտե՞ք թէ ինչպէ՞ս կը կազմուի այդ մահաբեր զէնքը՝ թոյնը:

Օձին քունքերուն մէջ գտնուող գեղձերը կ'արտադրեն թոյնը: Այդ վտանգաւոր նիւթը կը տեղափոխուի դէպի ծնօտին վերի մասին մէջ գտնուող սուր ակռաները, որոնք ընդհանրապէս 4-5 սանթիմետր երկարութիւն կ'ունենան: Երբ օձը հանգիստ ու հանդարտ վիճակի մէջ է, անոր ակռաները սեղմուած կ'ըլլան: Գրպանի դանակի նման ծալուած: Մակայն, երբ ան զայրանայ, ակռաները անմիջապէս առաջ կը ցցուին եւ սողունը շեշտակի հարուած կը հասցնէ:

Եթէ թոյն պարունակող ակռաները պատահաբար կոտորուին, անոնց փոխարէն անմիջապէս նորերը դուրս կու գան:

Օձերու խայթոցը այս կամ այն չափով կ'ազդէ բոլոր կենդանիներուն վրայ: Միայն, թէ կարգ մը կենդանիներու համար թոյնը շատ վտանգաւոր ու մահաբեր է, իսկ ուրիշներ կրնան դիմանալ այդ մահաբեր զէնքին, նոյնիսկ եթէ մեծ քանակով ըլլայ այդ թոյնը:

Այսպէս օրինակ, խոզերը օձի խայթոցէն պաշտպանուած են, հաստ ճարպային շերտով, որը գուրկ է արիւնստար անօթներէ: Հետեւաբար թոյնը չի տարածուիր խոզին մարմինին մէջ:

Օձին վտանգաւոր նիւթէն վախ չունի նաեւ ոզնին, որուն մօտենալը սողունին համար շատ դժուար է, ոզնիին ամբողջ մարմինը ծածկող փուշերուն պատճառով:

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՓՈՒՔԻ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ



Աշխարհի ամենափոքր պետութիւնը Վատիկանն է՝ Իտալիոյ մայրաքաղաքը՝ Հռոմի հիւսիսարեւելքը:

Թէեւ Վատիկանը շատ փոքր է, սակայն անկախ պետութիւն է եւ ունի իրեն յատուկ դրօշ, զինանշան, լրատուական միջոցներ, պատկերասփիւռային ընկերութիւններ եւ թերթեր, նոյնիսկ բանակ: Անոր բնակչութիւնը ընդամենը հազարէ աւելի չէ:

Վատիկանի ղեկավարը Հռոմի պապն է, որը նաեւ Կաթողիկէ եկեղեցւոյ առաջնորդն է: Վատիկանի բնակիչները մեծամասնութեամբ հոգեւորականներ են, նաեւ անձիք որոնք պետութեան ներքին կարգ ու կանոնին կը հետեւին եւ Հռոմի պապին կ'ուղեկցին երբ ան հանրային միջոցառումներու կը մասնակցի:



ԹԻՐԸ ՊՈՏՐՈՍՏՅՈՒՆՆԵՐՈՒՆ ԿՆՈՒՆԱՆ-ՏԻՔՈՒԹԵԱՆ
 ՆԱԿԱՐԱՅՈՒՆՆԵՐՈՒՆ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՇԵԱՆ


ՈՐ ՊՏՈՒՂՆԵՐԸ ՀԱՏԱՊՏՈՒՂ ԿԸ ԿՈՉՈՒՄ



Շատերը հատապտուղ կը կոչեն անտառի կամ այգիի կամ պարտեզին մեջ աճող թուփերու եւ ծառերու հիւթայի քաղցր պտուղները: Սակայն գիտութեան տեսանկիւնէն այդ մէկը այնքան ալ ճիշդ չէ, այսինքն բոյսերու գիտութեամբ զբաղող մասնագէտները հատապտուղ կը կոչեն հաստ կեղեւով ծածկուած պտուղները՝ հիւթայի միջուկով եւ սերմերու մեծ քանակութեամբ:

Կը նշանակէ, թէ մեր սիրած ձմերուկն ու սեխը նոյնպէս հատապտուղներ են:

Անոնք նաեւ դոմատեսակներ կը կոչուին, որովհետեւ այդ քաղցրահամ եւ համեղ բոյսերը կը պատկանին դոմազգիներու ընտանիքին: Ուրեմն, թէ դդումը եւ թէ վարունգը եւ դդմիկը նոյնպէս հատապտուղներ են:



ՈՒՐ Կ'ԱՃԻՆ ԵՐԿԱԹԷ ԾԱՌԻՆԸ

Երկաթէ ծառ կը կոչուի ո՛չ թէ մէկ տեսակի ծառ, այլ քանի մը ծառատեսակներ: Բոլոր երկաթէ ծառերը ունին քանի մը տարբեր առանձնայատկութիւններ: Նախ՝ անոնք շատ բարձր են՝ մինչեւ 25 մէթր, երկրորդ՝ այդ ծառերուն կեանքի տևողութիւնը կը հասնի մինչեւ 200 տարուան: Եւ վերջապէս բոլոր երկաթէ ծառերը շատ ամուր բնափայտ ունին, որ չի կրնար կտրել նոյնիսկ ամենասուր կացիներ:

Եթէ երկաթի ծառի մը գերանը կտրենք եւ ջուրը նետենք, ան անմիջապէս ջուրին յատակը կը սուզուի, սովորական երկաթի կտորի մը նման: Այդ ծառերու որոշ տեսակներէն նոյնիսկ մեքենաներու մասեր կը պատրաստեն:

Երէնոսը, որ նաեւ սեւ կը կոչուի, բնափայտի մութ գոյնին պատճառով, կ'աճի Ափրիկէի, Ասիոյ արեւադարձային անձրեւոտ անտառներուն մէջ, ինչպէս նաեւ Հնդկաստանի եւ Սրի Լանքայի կղզիներուն մէջ:

Ատրպէյճանի անտառներուն մէջ կը հանդիպինք պարսկական պատրուտիա կոչուող երկաթածառին, զորս տեղացիները «տեմիր աղած» կ'անուանեն: Նոր Զելանտայի մէջ աճող պուխուտուկաւայ ծառին անունը բառացիօրէն կը նշանակէ նորգելանտական Մուրք Օնդէան ծառ, որովհետեւ այդ ծառը կը ծաղկի Ս. Օնունդի օրերուն:

Մոչիի, կենու-տոսախի պուրակին մէջ կարելի է տեսնել շիշմատ անունով երկաթէ ծառը, որուն բարձրութիւնը յաճախ 12 մէթրի կը հասնի եւ մշտադալար կ'ըլլայ:



ԱՌՆԷՏՆԵՐԸ ԺՈՂՈՎ ԿԸ ԳՈՒՄԱՐԵՆ

Գիւղի մը մէջ առնետները
անհամար էին

Եւ փողոցներուն մէջ անդադար
Կը շրջագայէին համարձակաբար
Մարդիկը կ'ուզէին հնար մը գտնել
Այդ առնետներէն ազատելու համար
Դիոս դրկեց կատաղի ջարդարար մը
Որ դարձաւ գիւղացիներուն փրկարար
Խոշոր կատու մըն էր անունը Հարուն
Որ փողոցները կը չափէր օրն ի բուն՝
Վերջը բերելու գիւղին առնետներուն:
Շատերը զոհ գացին վայրագ ջարդերու
Փոքր թիւը վերապրող առնետներուն՝
Դարձած էր փորձառու եւ խիստ
խմաստուն:

Մարդիկ իմացան թէ Հարունն էր գացած
Լուրջ հարցի համար եւ չէր վերադարձած:
Անիկա գացած էր ամուսնանալու
Հրոպսէյնին հետ եւ վերադառնալու
Այս յարմար առիթէն օգտուելով՝
Առնետները շուտով եկան քովէ-քով
Շատ կարեւոր ժողով մը գումարելու
Անկէ ետք Հարունին ձեռքը չիյնալու
Ամենէն ծերը աւագանիին

Իր խոպոտ ձայնով ըսաւ բոլորին.
«Հաւանաբար չէք գիտեր նիւթը այս
ժողովին

Իրապէս մենք կ'ապրինք
ճգնաժամային օրեր
Արդ, մենք սակաւաթիւ փսացինք,



Բոնաւոր թշնամին ջարդել անհաշիւ
Այս բացառիկ համաժողովին
Պիտի փորձենք էլք գտնել մեր այս
հարցին,
Բոժոժ մը կախենք մեր մեծ թշնամին
պոչին

Որպէսզի մենք ըստ այնմ շարժինք,
Բոժոժի ձայնին՝ ամենքս ալ փախչինք»:
Առնետները բոլոր ծափահարեցին:
Անոնք առաջարկին համաձայն էին:
Ծերունին ըսաւ. «Ես ձեզի խելք տուի,
Չեմ կրնար ձեռք զարնել այդպիսի գործի,
Գիտէք թէ ես հագիւ տեղէս կը շարժիմ:
Ուրիշ մէկը պէտք է, մեր այդ ոխերիմ
Թշնամին պոչին բոժոժ անցընէ:
Տեսնենք թէ ձեզմէ ո՞վ է քաջակորով»:
Արդարեւ կեանքն այս աշխարհիս շատ
քաղցր է:

Մէկը ըսաւ. «Իմ աչքերս շատ տկար են»:
Երկրորդն ալ ըսաւ. «Ես եմ ապիկար»,
Վերջինը յարեց. «Նոր եմ ամուսնացեր,
Կ'ուզեմ ապրիլ, ունենալ զաւակներ»
Ոչ ոք իր կեանքը վտանգի ենթարկեց,
Ժողովս այդ վերջացաւ առանց արդիւնքի
Թող մեր ժողովներն ալ չըլլան յար նման
Ժողովականներն ժամավաճառ չըլլան
Պէտք է յարգուին ժամերն ու մարդիկ,
Իրարու յաճախ թող ընեն մտիկ
Ազգը եւ կրօնքը միշտ ալ գերադաս են
Բոլոր մարդերուն անձնական շահէն
Գեղեցիկ գաղափար տուողները՝ շատ
Գործադրողներուն դաշտերն են
անապատ:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԱՆԱՊԱՏ ՄԸ, ՈՐ ԳԱՐՆԱՆ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻ ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ՄԸ

Նամաքալանտի անապատը կը գտնուի Հարավային Աֆրիկէի եւ Նամիպիոյ միջեւ եւ կը ծածկէ 440.000 քառակուսի քմ. տարածք մը: Այս անապատը Աֆրիկէի ամենէն չոր վայրերէն մէկն է, սակայն ամեն գարնան անիկա անհատատալիօրէն կը կերպարանափոխուի՝ վերածուելով միլիոնաւոր ծաղիկներով ծածկուած հսկայական դաշտի մը: Այս 60.000 հեկտար մեծութեամբ տարածքին վրայ կը ծաղկին ծաղիկներու մօտաւորապէս 4000 տարբեր տեսակներ, որոնցմէ 600-ը յատուկ է այս անապատին:

ՍԱՀԱՐԱ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԻԱՅՆ 20 ԱՌ-ՀԱՐԻՒՐԸ ԱՒԱԶՈՎ ԾԱԾԿՈՒԱԾ Է

Երբ մենք կը մտածենք Սահարային մասին, յաճախ կ'երեւակայենք՝ անսահման արազի բլուրներ: Սակայն իրականութիւնը ամբողջովին տարբեր է:

- Գիտէի՞նք, որ Սահարա անապատի միայն 20 առ հարիւրը ծածկուած է արազէ բլուրներով:

Սահարան մեր մոլորակին ամենէն մեծ անապատն է, ան կը ծածկէ 3,5 միլիոն քառ. քմ. տարածութիւն: Այս ընդարձակ մակերեսը ծածկուած է ոչ միայն արազի բլուրներով, լեռներով, կրաքարերով այլ նաեւ՝ մանրախիճերով: Քարերով, համատա կոչուած աղի դաշտերով, չոր գետերով եւ անշուշտ՝ ովասիսներով:

ՎԵՑԵՐՈՐԻ ՑԱՄԱՔԱՄԱՍԸ

Անթարքթիքը կը համարուի վեցերորդ ցամաքամասը, որովհետեւ անոր սառոյցի հաստ խաւին տակ կան հողեր: Ան միակ ցամաքամասն է, որ պետութիւններ չունի, անոր տարածքը աւելի քան 14 միլիոն քառակուսի քմ. է:

Ոչ մէկը կ'ապրի հոն, բացի կարգ մը գիտնականներէ, որովհետեւ հոն կլիման շատ ցուրտ եւ չոր է:

